

ուրիշ տեղերէ ալ կարելի էր մետաքս արտածել: Արտածումը գլխաւորաբար հայոց ձեռքն էր աւելի հին դարերուն եւ ժիշ դարուն ալ կացութիւնը կը մնար անոնց ձեռքը: 4)

Վկայութիւնները ցոյց կուտան, որ հայ վաճառականներու եւ հայ կարաւաններու ձեռքին մէջ կը գտնուէին Հալէպով Միջերկրական եւ Կասպից ծովով Ասորիսիան եւ Արլանկէլ արտածման ճանապարհները: Նոյն ատեն մեծ մասամբ թրքահայ վաճառականներ Հայաստանի (Թրքական տիրակալութեան) մէջէն իրենց սպրանքն ու կարաւանները ցամաքի ճանապարհով, գլխաւորաբար Թաւրիզ-Կարին-Թաւրիզ-Անգարա, երբեմն իսկ Թաւրիզ-Վան գծով, յաճախ Թողազը իբր գլխաւոր հանգըրուան դործածելով կը հասնէին Կ. Պոլիս, Չմիւռնիս, թէեւ յիշատակութիւններ կան, որ Կէլիպոլու (Տարտանէլ) եւ Իզմիտի ծովածոցն ալ եղած են կարաւաններու հանդրուաններ, դուցէ ծովով ճամբան շարունակելը աւելի ատան նկատելով:

Այս ուղեգիծերը շարունակեցին իրենց կարեւորութիւնը պահել մինչեւ ժիշ դարու վերջը: Կ. Պոլիս կամ Իզմիտ կուգային Անգլիացի, Ֆրանսացի կամ Հոլանտացի⁵⁾ գնորդ

4) Թաւէրնիէ կը վկայէ որ 1643-ին Թաւրիզի մէջ կային «բազմաթիւ հայ ընտանիքներ, առեւտուրով վաստկուած ընդարձակ հողերու տէր, որոնք առեւտուրը Պարսիկներէն լաւ կ'ըմբռնեն... Հոն կան անհամար թիւ մը վաճառականներու եւ անհուն քանակութեամբ ամէն տեսակ սպրանքներ, մասնաւորաբար մետաքս, որ կը բերուի Գիլանի նահանգէն եւ ուրիշ վայրերէ»: (Անգլ. էջ 21)

Նոյն հեղինակը Արտէպիլի մաքին խօսած ատեն կ'ըսէ, որ քաղաքը մեծ համբաւ ունի իր «բազմաթիւ կարաւաններուն համար, որ մետաքս կը բերեն, երբեմն 8-900 ուղտի բռնէ բաղկացեալ, որ շատ բան կ'աւելցնէ քաղաքին մեծութեան վրայ, որովհետեւ Գիլանի եւ Շամախիի մօտ է, ուրիշ կը բերուի այս անհատնում քանակութեամբ մետաքսը, նոյն ատեն ունի Կ. Պոլիս եւ Չմիւռնիս տանող երկու ճամբաներ, եւն.» (էջ 28)

վաճառականներ եւ հոն հայ մետաքսավաճառներէն իրենց գնումները կ'ընէին: Հոլանտական արտադրողական եւ առեւտրական կեդրոններ իրենց բարգաւաճումը հայ վաճառականներուն կը պարտէին գրեթէ: 6) Կ. Պոլիսէն կամ Չմիւռնիսէն օտար առեւտրականներ իրենց սպրանքը իրենց նաւերով իրենց պատկանած երկիրները կը տանէին, թէեւ երբեմն օտար ուղեգրութեանց մէջ կը հանդիպինք հայ նաւազնաց վաճառականներու ալ, որոնք գլխաւորաբար ԺՁ դարուն Վենետիկ կ'երթային, իսկ ժիշ դարուն ալ Լիվոռնիս:

Ռուսական սահմաններով կատարուած հայ առեւտուրը այնքան խոշոր էր, որ մուսթին մէջ կը թողուր Թուրքիոյ սահմաններով կատարուած հայ առեւտուրին ամբողջութիւնը, մանաւանդ ժիշ դարուն, երբ կարծես Թրքա-

5) 1658-ին Պարսկահայ վաճառականներ, մետաքսավաճառներ, Չմիւռնիոյ շարաբարոյ Հոլանտացի ներկայացուցիչին դէմ բողոքազիր մը կը զրկեն Ամսդերտամ՝ Հոլանտական կառավարութեան: Բողոքազիրը, որ ծանօթ է քանի մը հրատարակութիւններով, կը տեղեկացնէ, որ հայ վաճառականները Չմիւռնիոյ մէջ մթերած ունին տեղական (արեւելեան) կերպաններ եւ մետաքսեղէն, հոն ամբարուած Հոլանտա զրկուելու համար, սակայն տեղւոյն Հոլանտական ներկայացուցիչը դժուարութիւններ կը յարուցանէ եւն.: (Հոլանտան եւ Հայերը — Սարուխան, Հանդէս Ամստերդամ, 1925, էջ 161):

6) Ճոնաս Հանուէյ Անգլիացի վաճառական-ուղեգիրը ԺԸ դարուն Ամսդերտամ այցելելուն կը գրէ. «Լէյտընի հեռաւորութիւնը (Ամսդերտամէն) տասնեւհինգ անգլիական մղան է... Նշանաւոր է նաեւ բուրդէ կերպասի նշանակելի արտադրութեամբ, որ, սակայն, անցեալ քանի մը տարիներուն շատ նուազած է, մասամբ այժմ փճացած Պարսկական առեւտուրին պատճառով, որ Հայոց կողմէ կը կատարուէր: Ասիկա հաւասարապէս կ'ազդէ նաեւ Ամսդերտամի մետաքսի արտադրութեանց վրայ:» (The British Trade over the Caspian Sea, London, 1754, Vol. II. p. 47):